

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 265-Ա

31 օգոստոսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 19-ի N 2031-Ա, N 2034-Ա, N 2035-Ա, N 2072-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 26-27-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Հայկազ Պողոսյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Եղբարության 16.
 - 2) «Մերուժան Բուլղադարյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 1-31.
 - 3) «Մուրադ Մինասյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Բագրատունյաց 16.
 - 4) «Յուրոն» ՓԲԸ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1.
 - 5) «Դենտսթար» ՍՊԸ՝ ք. Աշտարակ, Ա. Մանուկյան 17/17.
 - 6) «Արա Ղուկասյան» Ա/Ձ՝ ք. Աշտարակ, Գրիգորյան 57.
 - 7) «Աշտարակի ստոմ պոլիկլինիկա» ՓԲԸ՝ ք. Աշտարակ, Աշտարակեցի 33ա.
 - 8) «Հարություն Վարսանյան» Ա/Ձ՝ ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 21:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 31/08/20 18:18:30 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ